№ 116 ՀԻՆԳՇԱԲԹԻ 30 ՄԱՅԻՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ 30 ՄԱՅԻՍԻ № 116

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 բուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՕՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կօպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

ԲՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 6 ՐՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակատոմար; ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՇԵՏԵՒԱԾ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կօպ.։

Գովազդ դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնայում՝ Большая 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

1913 թվի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 բուբլին, օրիաբար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Սօֆիա Սահակեան՝ զաւակներով—Հռիփսիմէ, Շուշանիկ, Մարիամ, Մարգարիտա, Յովսէփ՝ իր ամուսնով, Վարդան, Հայկ և Կոստանդին Մանդինեանները յայտնում են ազգականներին, ծանօթներին և ընկերներին՝ առաջինն իր թանգագին ամուսնու, իսկ միւսներն իրանց սիրելի հօր՝ Ներսիսեան դպրոցի նախկին ուսուցիչ՝

ԱՄԻՐԱՆ ՄԱՆԴԻՆԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ մայիսի 28-ին։ Ամբիծքի շաբաթ, յունիսի 1-ին, երեկոյեան ժամը 6½-ին։ Մարմին յուղարկաւորութիւնը կիրակի, յունիսի 2-ին, առաւօտեան ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանից (Շելկովնիկովսկայա փող. № 10) դէպի Վանքի մայր-եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատունը։

(2. կ.) 443. 3—1

ՅՈՒՑԱՀԱՆԴԷՍ
ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆԻ ՆՈՐ ՆԿԱՐՆԵՐԻ

Բաց է Զմերային Ժողովարանում առ. ժամը 10-ից մինչև երեկոյեան ժամը 6-ը։
441. 5—2 առ.

ՂԱՐԱԲԱՂԻ թեմական առաջնորդ ՅԱՒԷՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ձեռնարկութեամբ ներկայ տարվայ յունիսի 15-ից մինչև օգոստոսի 15-ը Շուշու թեմական դպրոցում բացվելու են

„Հանրամատչելի երգ-երաժշտական դասընթացներ“

ուսուցիչ-ուսուցչուհիների և այլ անձանց համար։ Դասընթացներում առանձնվելու են հայկական և եւրոպական ձայնագրութիւն, տարրական երաժշտական թէորիա և հարմոնիա, սոլֆէջիօ, դաշնամուրի դասեր և այլն։ Դասախօսելու են դպրոցական երգեցողութեան, հայ և ընդհանուր երաժշտական պատմութիւնից։ Դասընթացները ղեկավարելու է Ե. ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԸ։ Պարապմունքների համար (երգեցողութիւն, դաշնամուր և այլն) հրաւիրված են նաև երգչուհի օր. ՍԱԹԵՆԻԿ ԱԼԼԱՀՎԵՐԴԵԱՆ և պ. Ս. ՄՈՒՐԱԴԵԱՆ։ Դասընթացների ուսման վարձն է ընդամենը 10 ր.։

Դիմել Յարութիւն ա.-ք Վարդապետեանցին. Шуша. Благочинному Арутюну Вардапетяну.
(հ. կ.) առ. 439. 3—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

ԱՅՍՕՐ, հինգշաբթի, մայիսի 30-ին

պ. պ. անդամների, կանդիդատների, նրանց ընտանիքների և հիւրերի համար տեղի կունենայ

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԵՐԳ

2 բաժանմունքից

Արեւելեան երաժշտախմբի

բաղկացած 30 հոգուց, ղեկավարութեամբ ՍԻՐՈՂ ԹԱՌՆՈՒԱԳՈՂ

Բալա Մելիքեանի

մասնակցութեամբ շուշեցի յայտնի երգիչ Սէյիդի և ճիանուրի վրա նուագող Սէվիրի։

Թառի վրա սօլօ կը նուագէ ՄԵԼԻՔԵԱՆԸ։

Համերգի սկիզբը երեկ. ժամը 6½-ին։

Տոմսակները 75—30 կօպեկ։

Հիւրերը՝ ըստ յանձնարարութեան՝ վճարում են մուտքի համար՝ տղամարդիկ 50-ական կօպեկ, կանայք և ուսանողները 25-ական կօպ.։

առ. 446. 1—1

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆԸ

մեկնեց ԿԻՍԼՈՎՈԴՍԿ (հանքային ջրեր)

Հիւանդների ընդունելութիւնը՝ Կօլսօովայի հիւրանոցում («ՆԱՐԶԱՆԻ» գալերէայի դիմաց)։

առ. 444. 3—1

ԲԺԻՇԿ

Յ. Մելիք-Նուբարեան

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐ

ԴԻԼԻՋԱՆՈՒՄ

ԲԱԴՎԱԼԵԱՆԻ ԱՄԱՐԱՆՈՑՈՒՄ

(Աթաբէկեանի ամարանոցի դիմաց)։

(25,30,5) առ. 746. 100—93

По умѣреннымъ цѣнамъ
Новѣйшихъ изящныхъ рисунковъ.
ПОЛНОМѢРНЫЕ

ОБОИ

ФАБ'Р. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ № 7.

357. 50—8 (հ. կ.)

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչէվսկայա 13, տէլէֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներին, նոյնպէս և վիրաբուժական կարիք ունեցող մնայուն ստաціոնարդ հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից), տաղտուկ գրվելու պայմանով։

Ընդունելութիւն կանացի, ներին և մանկական հիւանդութիւն ունեցող երթեկ հիւանդների, ամեն օր՝ ցերեկ. ժամը 11-ից մինչև 12-ը։

Ընդունելութիւն պրոֆ. Մ. Ս. Սուրբօվինի կողմից վիրաբուժ. կարիք ունեցող հիւանդների, տաղտուկ գրվելու պայմանով, երկուշաբթի և հինգշաբթի օրերը ցերեկ. ժամը 1—2-ը։

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Յարութիւնեան, Ն. Ն. Վասիլիզովա, Վ. Ա. Զակրժէվսկի, Ի. Գ. Կազամարեան, Ա. Ա. Նօվիցկիյ, Գ. Ս. Տէր-Սերսէսեան, Ե. Զ. Ռամիկեան, Ա. Ռ. Փիշէր, Մ. Պ. Շահպարոնեանց։ Կօնսուլտանտ՝ պրոֆեսոր Մ. Ս. Սուրբօվին։

(հ.կ.) առ. 779. 100—58

ԲԺԻՇԿ

ՅՈՒՇԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ

Ընդունում է հիւանդներ կանանց և մանկաբարձութեան վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը։

Հասցէն՝ Ռտիշչէվսկայա № 1.

առ. (հ.հ.կ.) 4. 100—60

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Պետերբուրգից ստացված մի հեռագիր յայտնում է, որ Պետական Դուման մայի մէջ արտաքին գործերի մինիստրի հանդէս գալը՝ բացատրութիւններ տալու համար արտաքին քաղաքականութեան մասին, որ ենթադրվում էր ամսիս 29—30-ին, յետաձգված է մինչև շաբաթվայ վերջը։ Ինչպէս մեզ յայտնում են, հայ պատգամաւոր Միք. Պապաջանեան մտադիր է հարցապնդումն անել հայկական հարցի մասին։

—

Կ. Պոլսի պատրիարք Արշարունին Շեվքէթ-փաշային նոր բողոքագիր ներկայացրեց մօտաւորապէս հետեւեալ բովանդակութեան.

Վերջին յուշագրի յանձնելուց յետոյ Բ. Դուռը ոչ մի միջոց ձեռք չառաւ հայկական ջարդերի առաջն առնելու համար։ Նոյն գաղանութիւնները շարունակվում են անպատիժ։ Անատոլիայում և Կիլիկիայում վտանգը աճում է։ Առանձին սպանութիւնները վերջ չունեն, կողոպուտները շարունակվում են։ Հայ հողագործները երկիւղից դաշտերս չեն գալիս, ամբողջ առաւօտը կանգ է առել, և, ինչպէս Աբդիւլ-Համիդի օրով էր, հայերը միակ փրկութիւնը որոնում են գաղթելու մէջ...

Հայոց պատրիարքարանի խառն ժողովը որոշեց, որ եթէ Բ.Դուռը 15 օրվայ ընթացքում չը կատարէ իր տուած խոստումները, այն ժամանակ պատրիարքարանը դիմելու է մեծ պետութիւնների դեսպաններին և օտարերկրեայ մամուլին՝ նկարագրելով հայերի վիճակը։

—

Կ. Պոլսից տեղեկացնում են, որ Փոքր-Ասիայում Խարբերդի վիլայէթի գեներալ-նահանգապետ Զէքմալ-բէյին տեղափոխեցին ուրիշ տեղ այն պատճառով, որովհետև քիւրդերը դժգոհ էին նրանից հայերի վրա իրանց գործած բռնութիւնները արգելելուն համար։

—

Կ. Պոլսից հեռագրում են.

«Մի քանի օր առաջ հայոց պատրիարքը խնդրեց Բ. Դրան քննել Բիթլիսի վիլայէթի Գիլան կոչված տեղում սպանված 4 հայերի գործը և պատժել յանցաւորներին։

«Մեծ վէզիրը հաւաստիացրեց պատրիարքին, որ այդ խնդիրը կը կատարվի։ Սակայն Բիթլիսի հայոց առաջնորդը տեղեկացրեց պատրիարքին, որ կառավարութեան խոստումը ոչ միայն չէ կատարված, այլ և քիւրդերը մայիսի 17-ին նոյն Գիլանում սպանել են դարձեալ 3 հայի։

«Մի շարք փաստեր հաստատում են, որ գոյութիւն ունի Բիթլիսում հայաջինջ կազմակերպութիւն, որ գործում է քիւրդերի օգնութեամբ»։

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹԻՒՐԲԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Վան, 11 մայիսի

Շարունակվում են նորից ալան-թալան ու սպանութիւններ, իւրաքանչիւր օր մի տեղից մի գոյժ է հասնում, որոնց ամենին արձագանք չեն կարող լինել «Մշակի» սուղ էջերը։

Խիզանի Անապատ գիւղացի մի հայ անհետացել է. հաւանականաբար սպանած ու դիակը անհետացրած լինեն։ Կարասու գիւղը խմբով մի ուրիշ հայի սպանված դիակը երեան է եկել։ Քէօչանի գիւղացի Աղաւնի անուն մի կին՝ իր հօր տունը—Պղանց գիւղում—հիւր գնալիս՝ իր եղբօր ընկերակցութեամբ, պատահում են 5—6 զինեալ ոստիկաններ, որոնք բռնաբարում են թշուառ կնոջ պատիւը, որը յղի լինելով տունը հասնելիս քիչ ժամանակ յետոյ վիժում և ապա մեռնում է չարաչար տանջանքներով։

Աղբակ գաւառի Խառարդուն հայ-քիւրդական գիւղում Բաղդասարեան Բաղդոյի կինը առանձնվում է նոյն գիւղացի մի քիւրդ երիտասարդից ու կրօնափոխ է լինում. նոյնպէս առանձնվել է նոյն գաւառի Հասպլոտան գիւղացի Մարիամ անուն մի կին։ Նոյն գաւառի Բաղ գիւղում քիւրդեր յարձակումներ են արել Մարկոսի տան վրա, փորձելով սպանել նրան իր տանը. մի ուրիշ հայի սատիկ ծեծել են. մի ջրաղաց քարուքանդ են արել, աւերել, մի ուրիշ հայի անից էլ երկու եզներ տարել. յուսահատ ժողովրդի դէմումները կառավարութեան մօտ մնում են անհետեւանք. կառավարիչ Զէվդէթ բէյը բաւականանում է ասելով. «Ի՞նչ անեմ, իմ ձեռքում բաւական զինուորական ոյժ չունեմ զսպելու համար անհանդարտ տարրերին իւրաքանչիւր գիւղում»։ Արդեօք սա կառավարութեան վայե՞լ մի պատասխան է և կարող է արդարացնել մի պետական պաշտօնեայի։

Այս օրերս աւելի սենսացիօն տեղեկութիւններ են հասել. աւազակ Միր-Մահէն հարիւրի մօտ զինեալ ձիաւոր ընկերներով ասպատակում է երկիրը. Խօշաբ գաւառում մի ժանդարմի սպանութիւնից յետոյ, որը ծանուցել եմ վերջին նամակներիցս մէկով, նա կողոպտեց մի շարք քիւրդերի, տանելով ձիեր, զէնքեր, դրամ և այլն. հասատակեց, որ Արճակ գիւղում անյայտացած մի թիւրքի—որի պատճառով գիւղը խուզարկութեան ենթարկվեց, ինչպէս ծանուցել եմ—նոյն աւազակը գերի է վերցրել ու իբրև փրկանք պահանջում է 150 ոսկի։ Շատախի Վայխալ գիւղում սպանել է պետական մի հարկահաւաքի, երկու ժանդարմների ու նոյն գիւղացի Ալի աղա անուն մի քիւրդի։

Նախորդ նամակներից մէկով յայտնել եմ արդէն Խումար գիւղի 1100 ոչխարների յափշտակութիւնը. այսօր էլ Շատախից հեռագրվում է, որ նոյն աւազակը նորից յափշտակել է Կաճետ հայ գիւղի հաւաքից աւելի ոչխարներն ու երկու հովիւներն էլ սպանել է. հեռագիրը ասում է, որ աւազակապետ Շաքիրի նախագահութեան ներքև կազմվել է չարագործների ու աւազակների մի խմբակցութիւն, տեղական վիճակն ու խաղաղութիւնը վրդովելու նպատակով. ժողովուրդը յուսահատած՝ մի ելից հնար չէ գտնում և չը գիտէ ինչ անել. ճանապարհները նորից փակվել են. մի այլ կողմից գործում է աւազակ Մահմէն, և Խիզանի սպանութիւններն էլ բնականաբար նրա գործն են։ Իրաւունք չունենք նախորդ նամակով ասելու, որ լուրը տաղնապների նախօրեակումն ենք ապրում։ Եւ սա սկիզբն է երկանց։

Լսվում է դարձեալ, որ Ողիմ հայ գիւղը պաշարվել է քիւրդերից և թէ նոյն գիւղը կրիտիկական դրութեան մէջ է գտնվում այս ժամում. սպասվում են նոր գուժալի տեղեկութիւններ։ Ողիմի յարձակումը կազմակերպել է, ասում են, նշանաւոր շէյխ Սայիդ Ալին՝ նախապէս իրար հետ հաշտեցնելով Տնխս և Բարվար գաւառների քիւրդերին, որովհետև այս վերջինները ցարդ պաշտպանում էին ողմեցիներին տեղեկացների դէմ։

Քիւրդ հօրդաներն ահա այսպիսի խռովութիւններով ու ոճիրներով ողջունում են նոր վալի Թահսին բէյի գալուստը, որ ամսիս 3-ին քաղաքս ժամանեց և, ինչպէս բոլոր նոր վալիները, խոստումներ է շռայլում երկիրը խաղաղեցնելու ու նրան մի դրախտի փոխակերպելու։ Ցիրաւի արդօք. մենք սպասում ենք, որովհետև ուրիշ միջոցներ չունենք, եթէ նա էլ մի քանի ամսից յետոյ պաշտօնանկութեան բաղդին չը պատահի, ինչպէս իր նախորդները, որոնցից իւրաքանչիւրը հազիւ 4—5 ամիս պաշտօնավարեց, այն էլ դժգոհ թողնելով տեղական ազգաբնակութիւնը։

Մարակ

ԽԱԲՐԻԿՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՅԵՐԻՑ

Էրզրում, 26 մայիսի

Գործադրութեան է դրվել իթթիհադական կաբինէտի կազմած «Ընհանդգային բարեկարգութեան նոր օրէնքը»։

Պէտք էր ընտրել ժողովրդական ներկայացուցիչները, որոնք ծրագրէին նահանգի կարիքները։

Կառավարութիւնը լուիլ-մինչեւ հաւաքում է պարլամենտական ընտրութիւնների ժամանակ երկրորդ կարգի ընտրողներին և նրանց քուէներով ընտրել տալիս ժողովրդական ներկայացուցիչներ։ Երկրորդ կարգի հայ ընտրողներից շատերին չեն կանչել և, բացի այդ, չափազանց շուտ են նշանակել ընտրութեան օրը։

Ընտրվեցին 4 թիւրք և 1 հայ։

Հայերը բողոքում են այդ ընտրութեան դէմ, բայց ի զուր։

Եւ ահա կառավարութեան մշակած «բարեկարգութեան» ծրագիրը արհամարհանքի արժանանալուց վերջ՝ այսօր սկսում է հանդիպել ժողովրդական բողոքի ևս։

«Բարեկարգութեան» այդ ծրագրի գործադրութեան ձևը արդէն բաւական է հասկացնել տալու, թէ որքան արժանիք կարող է ունենալ նա։

Քուրմ

ԿԻԼԻԿԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

Հալէպ, 1 մայիս

Կը ցաւինք, որ լուրերէ աւելի գոյժեր տալու տխուր հարկին ներքև կը գտնուինք։ Կիլիկիոյ ամեն կողմերը մահառոտ տարաձայնութիւններ շրջան կընեն բերնէ բերան, երբեմն խեղաթիւրուած, բայց դժբաղդաբար ամենքն ալ իրաւ, ամենքն ալ մէկ մէկէ աւելի ցաւալի, ջլատիչ և յուսահատ։

Ամբողջ նահանգը ելեքտրականացած է. ամենափոքր շարժում, շփում կամ անուշադրութիւն մեծամեծ համեմատութիւններ առնելու միշտ պատրաստ, միշտ տրամադիր է։ Վայրկեանը շատ փափուկ է և շատ պատմական։ Ամեն կողմ դէվրիշի կամ մօլլայի տարազին տակ թիւրք պրօպագանդիստներ՝ ազգայնական կոյր մոլեռանդութիւնը կը գրգռեն. խուժանավարներ միամիտ գիւղացւոց մտքերը կը պղտորեն և կը թունաւորեն ինքնապաշպանութեան սուտ պիտակին տակ, քրիստոնեաները կամ, աւելի ճիշդը, հայը հարստահարելու, ջարդելու, սպաննելու կը մղեն։ Զանցնիր օր առանց սպառնալիքի։ Ամեն առթիւ թիւրքաց բերնին յանկերգը՝ «Օրերնիդ համրուած է, պիտի ցուցնենք ձեզի» խօսքն է։ Հայը, միշտ վախը սրտին, միշտ կասկածոտ, կը տառապի, կը մխայ ու կը սպառի։

Սրտակեղէք աղաղակներ, կոչեր, հեռագիրներ և տեղեկութիւններ կը տեղան պատրիարքարան. դեռ մէկ ցաւին դարման չդտած, կը նորոգուին։

Դժբաղդաբար, այսպիսի մթնոլորտի մը մէջ, ճնշող քաղաքականութեան տակ հեծող ժողովուրդին միամտութիւնը յիմարաբար լարող ոչնչութիւններ ալ պակաս չեն։ Հաջողն ալ այդպիսիներ հաղուադէպ չեն դժբաղդաբար. անձնական կիրքերու համար ամբողջ ազգը տուժելու պատրաստակամ ամբոխավարներ՝ աւազակաց խնդիրը կուզեն շահագործել. և իրարատելութենէ դըրդեալ՝ ժողովուրդը աղաներուն դէմ հանելու փորձերէ չեն քաշուիր. դժբաղդ երկիր։

Հայը այս տեսակէտով ամենադժբաղդ հայերու հաւաքավայրն է։ Գրեթէ սպանդանի մէջ կայրենք. արտաքին վախը մէկ կողմէն, ներքին անիշխանութիւնը միւս կողմէն։

Ոստիկաններու խնդրէն ասդին քաղաքին մէջ յուզումը օրէ-օր կաւելնայ։ Թիւրք և հայ ազգաբնակութիւնք փոխադարձ կասկածանքով կը վերաբերուին։ Ցաւալի է, որ կառավարական շրջանակներու մէջ ալ նոյն մտայնութիւնը կը տիրէ, աւելի ոյժ կը տրուի իսլամ մոլորեցուցիչներու սուտ տարածութեանց, զորս իբր իրականութիւն ներկայացնելով՝ կուզեն հայը ճնշել։

Այսպէս, քանի մը օր առաջ, գիշերանց կը կայծակահարի թիւրքի մը տունը, մինչ ինք Բումէլիէ-նորեկ ոստիկան զինուորներէն հրանիւթ և պայթուցիկ պատրաստել կը սորվի։

Ահա, տարածած, ճիշդ կէս գիշերուն, նոյն տունէն արձակուած հրացանի պայթիւնէն ամբողջ քաղաքը խուճապի կը մատնուի։ Հայերը, սոսկումով, յանկարծական յարձակման մը առջև կը զգան ինքզինքնին։

Տեղալը, քաղքրտուելով, դէպքին վայրը կը տարուի. բոլոր թիւրք պաշտօնէութիւնն այդ դէպքը հայերու կողմէ պայթուցիկ նետուած ըլլալուն կը վերագրէ։ Թունաւորիչ հեռագիրներ կը տեղան վիլայէթ, վստահ՝ թէ կարեւորութիւն կը տրուի իրենց ըսածին, քանի որ մէկ-երկու օր առաջ, տեղական սպառնական հեռագիր մը եկած էր վիլայէթէն թէ՝ «Ամեն կողմ հայկական դատին ի պաշտպանութիւն պրօպագանդիստներ կը շրջին. հոդ ալ կան այդպիսի բաներ. այդ տեղացիք թող գիտնան, որ հետեւանքը առջինէն շատ աւելի դէշ պիտի ըլլայ»։

Զերբակալութիւնք կը սկսին և կը տեւեն, հակառակ այն բանին, թէ պայթուցիկ նետուած ըլլալը չի հաստատուիր։ Մինչ ասդին ոստիկաններու գաղտնի և մըտերմական խօսակցութենէ մը ճշմարտութիւնն ակներև կը պարզուի։ Կասկածելի ձերբակալեալք դեռ բանտը կը մնան սպառնալիքի տակ։

Տեղալը, որ հայ մըն էր, անմիջապէս պաշտօնանկ կըլլայ։

Առաջնորդական փոխանորդը, շուաքած, չգիտէ թէ ի՛նչ ընէ. իրողութիւնը վեհափա-

ուն, վիլայէթ, պատրիարքարան և ներքին գործոց մինիստրին հեռագրեց։ Կը յուսանք, որ մօտալուտ վտանգը ժամանակի մը համար ալ ուշանայ։ Բայց ոչ խպառ։

Լ.—Ժ.

ՎԼՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

—

Կ. Պոլիս, 16/29 Մայիս

Հարստահարական դէպքերու և մէկով երկուքով բազմաթիւ սպանութիւններու, հայոց դէմ ծանր սպառնալիքներու և այլն լուրերը շարունակ և անընդհատաբար կը հասնին գաւառներէ։

Պատրիարքարանը յուսահատութեան մատնուած է և շարունակ Բ. Դրան դիմելով «անիրաւ դատաւորը» ձանձրայնելու կաշխատի։ Սակայն անիկա անկարեկիր կը մնայ։ Ազգ. ժողովէն կարգուած խորհրդարանական յանձնաժողովը և վարչութեան ազահութեան յանձնաժողովը շարունակ նիստ կը գումարեն։

Երէկ, ամսոյս 15-ին, դարձեալ նիստ մը ունէին, պատրաստելու համար ծրագիր մը, որ համախորհուրդ պիտի ներկայացնեն ազգային ժողովի վաղուան նիստին, որ պիտի գումարուի բոլորովին դռնփակ կերպով, միայն հայկական խնդրով զբաղելու համար։

Կըսուի թէ խառն յանձնաժողովը ազգ. ժողովին պիտի ներկայանայ բոլորովին յուսահատ և պիտի ներկայացնէ ըստ այնմ յուսահատական միջոցներ, որոնց կարգին է վարչութեան և պատրիարքին հրաժարականը։

Վարչութիւնը դիւրաւ չէ յօժարած սակայն այս ծրագրին և միշտ պաշտպանած է սա տեսակէտը, թէ անօգուտ է ազգը առանց իշխանութեան թողուլ։ Վարչութիւնը պարզակէս չուզեր թողուլ իր պաշտօնը, որուն կոչած ըլլալ կը թուի, չենք գիտեր ինչու։

Կրօնական ժողովը իսկ, որուն պայմանաժամը լրացած է, չի թողուր իր պաշտօնը, ուրկէ ըստ օրէնքի արդէն ձեռնթափ եղած պէտք է ըլլար մայիսի սկիզբը։ Պատրիարքին ալ արտադրութիւնները դեռ յայտնի չեն։

Ազգ. ժողովէն կարգուած խորհրդարանական յանձնաժողովին պահանջմամբ, վարչութեան ապահովութեան յանձնաժողովը, կըսուի թէ, հաւանած է պատրիարքին և վարչութեան հրաժարականին, սակայն վարչութեան ամսոյս 15-ին գումարած նիստին մէջ այս առաջարկը չէ գտած պէտք եղած ընդունելութիւնը և որոշած է, որ վաղը՝ ուրբաթ օրը, ազգային ժողովի գումարումէն առաջ, խառն ժողովը արտասովոր նիստ մը գումարելով նկատի առնէ իր դիրքը և անոր համեմատ որոշում մը տայ։

Առայժմ ճշդել կարելի չէ թէ վարչութեան մէջ որ հոսանքը աւելի զօրաւոր պիտի ըլլայ և ինչ եզրակացութիւն առաջ պիտի գայ։

Սակայն քանի մը կէտեր կան, որոնք հանրային մտատանջութեան առարկայ ըլլալ սկսած են հիմակուընէ։

Մանաւորապէս պատրիարքին և վարչութեան հրաժարականը մենք կընդունինք թէ,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕԼԳԵՆԻՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ*)

—

Թիւրքահայը գաղթում է,—շարունակում է Օլգենինը,—և այդ գաղթը աճում է հետզհետէ։ Թիւրքահայը փախչում է նզովեալ «սահմանադրական» երկրից... Ռուսաց հիւպատոսների վիճակագրութեան համաձայն, միայն ապրիլ ամսում Խարբերդի շրջանից գաղթել են աւելի քան 1000 հայ, Էրզրումի վիլայէթից դարձեալ մի ամսում 1276 հոգի։

Գաղթականութիւնը նպաստում է նաև հայ զինուորների հարցը, որոնք ուղղակի մարտիրոսացրվում են Թիւրք իշխանութիւնների շնորհիւ։ Հայ զինուորներին պատերազմի ժամանակ կանգնեցնում էին միշտ առաջին շարքերում, որպէսզի թշնամու գնդակների առաջին զոհերը նրանք լինեն... Հայ զինուորների պատիւը ընկած է թիւրքաց զօրանոցներում. Թիւրք զինուորները օֆիցէրների խրախուսանքով նայում են հայ զինուորների վրա արհամարհանքով ու թշնամութեամբ։ Ինքը Օլգենինը ականատես է եղել թիւրք իշխանութիւնների գործադրած բարբարոս վերաբերմունքին դեռ բալկանեան պատերազմից առաջ քրիստոնեայ զինուորների վերաբերմամբ։ Այնքով տեսել է քրիստոնեայ զինուորների լեզուները կարած...

Եւ բնականաբար այդօրինակ դրութիւնը պէտք է ստիպէ երիտասարդ հայերին փախչել արհաւիրքների ու աղէտների աշխարհից։

Միայն Մալաթիայի շրջանից գաղթել են 16—20 տարեկան մօտ 400 հայ կարիճ երիտասարդներ։

— Լաւ մտածեցէք, պարոնայք,—ասում է դատախօսը,—թէ որքան ծանր ու հոգեմաշ է այդ կացութիւնը։ Փախչում են խորտակված ժողովրդի ամենակենսական, թարմ ոյժերը։ Ընթանում էք, արդէօք, դրութեան սարսափը։

Ուրեմն տնտեսական և հողային աննախանձելի կացութեան հետ թիւրքահայ անեւրոպայի մէջ հայոց խնդիրը արծարծուած մէկ պահուն, ունի իր նշանակութիւնը և ամենէն դրական մասնակցութիւնը կրնայ ըլլալ արտասահմանեան հայոց ստեղծած շարժումին, որուն դժգոհութեամբ և բողոքի այս արտայայտութեամբ միացած կրնան համարուիլ թիւրքահայոց ներկայացուցիչ այս մարմինները։

Սակայն այս տեսակէտին դէմ կան ուրիշ ոչ նուազ կարևոր առարկութիւններ ու դիտողութիւններ, զորս ալ պէտք է նկատի առնել։

Թիւրքահայերը կը գտնուին անմիջական վտանգի մը տակ, և հեռաւոր ակնկալութեան մը համար ներկան չարաչար վտանգելէ պէտք է զգուշանան։

Արդ, յայտնի է, թէ պատրիարքին ներկայացուցած յիշատակագիրը ի՞նչ տպաւորութիւն ըրաւ թիւրքաց վրայ։ Թիւրք մամուլը, մասնաւորապէս անոր շօվէն ներկայացուցիչները, շատ դառն կերպով յարձակեցաւ հայոց վրայ, պետութեան այս նեղ կացութենէն օգտուող ցոյց տալու համար հայերը, և յայտնի զգուշիչ հրատարակութիւններով կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրեց Պոլսոյ-փաշայի գլխաւորութեամբ Եւրոպայի մէջ գործող պատուիրակութեան վրայ։

Յայտնի զգուշութիւն մը կայ ուրեմն հայոց դէմ թիւրք ժողովուրդին մէջ։

Իսկ կառավարական շրջանակներու մէջ ալ տրամադրութիւններն արդէն յայտնի են։ Եպարքոս Մահմուդ-Շէվքէթ-փաշայի դառն խօսքերը և զայրալից վերաբերումը պատրիարքին հանդէպ, անոր՝ եւրոպական դեսպաններուն դիմած ըլլալուն մասին, ցոյց կուտան, թէ կառավարութիւնն ալ ինչ ոգի կը սնուցանէ հանդէպ մեզի։

Այս պայմաններու մէջ պատրիարքին և վարչութեան հրաժարականը կատարեալ խլում մը պիտի նշանակէ և լարուած տրամադրութիւնները անդամ սաստկացնելու պիտի նպաստէ։

Եթէ արդիւնքը արժէր այս վտանգաւոր խաղը խաղալ, պէտք էր որ վարչութիւնը առանց վարանման տար իր հրաժարականը, որ զանազան պատճառաբանութիւններով չուզեց մատուցանել ակէ առաջ և ինքնագլուխ, առանց ազգային ժողովի որոշման, կառավարութեան հետ նոր բանակցութեան առիթ ստեղծեց նոր յիշատակագիր մը մատուցանելով։ Այնպիսով ուրիշ նպատակ չունէր, եթէ ոչ երկարաձգել իր օրհասը։ Յիշատակագիրը տալէն յետոյ շատ դիւրահասկնալի էր, որ վարչութիւնը պիտի առարկէր, թէ անմիջապէս կարելի չէ հրաժարիլ, վանդի յիշատակագրին տակաւին պատասխան չէին առած. թէ առաջարկուած բարենորոգումները մէկ օրէն միւսը դրծադրել կարելի չէր, թէ պէտք էր ժամանակ տալ կառավարութեան, որ կարենար իր խոստումները գործադրել և այլն։

Այս կերպով՝ վարչութիւնը կուզէր մէկերկու ամիս շահիլ։

Սակայն, դժբաղդաբար կամ բարեբաղդաբար, այս ծրագիրը կարելի չեղաւ իրագործել, Մահմուդ-Շէվքէթ-փաշայի չափազանց կարուել ընթացքովը և տիրող անապահով ու սպառնալից վիճակի օրէ օր աւելի ծանրանալովը։

Կառավարութեան կողմէ մասնաւորապէս հայերը ընկճելու և հայերը ջնջելով հայկական խնդիրը իսպառ ու արմատէն բնաջինջ ընելու ծրագիրը ընդդիմադրած ըլլալը որոշապէս կերևի։

Եւրոպա՝ ինչպէս երբեմն Համիդի մեղսակիցը եղաւ, եթէ այս անգամ ալ երիտասարդ-թիւրք վարչութեան շնորհէ իր օժանդակութիւնը և հովանաւորութիւնը զանազան ասպիճանի կաշառքներ ստանալով, իրաւամբ ջնջուած է հայութիւնը։

Սա այժմ, սակայն, երևոյթները այնքան յուսահատական չեն։ Քաղաքական շահակցութիւններ կամ մրցակցութիւններ բռնատակալ, ներդաշնակութեան մը և համերաշխութեան մը ձևին տակ արտայայտուած, կը հետապնդեն իրենց մասնաւոր շահերը։

Գաղտնիք չէ, թէ Եւրոպայի մեծ պետութիւնները բալկանեան պատերազմը ինչպէս կը շահագործէին, առանց արիւնահեղութեան խաղաղօրէն թափանցելով Ասիական Թիւրքիա։ Անգլիա առաջին բաժինը ստացաւ արդէն։ Ուրիշներ ալ անշուշտ իրենց բաժինը պիտի ստանան։ Հայոց խնդիրը եւրոպական կառավարութեանց դէպի Ասիական Թիւրքիա խաղաղ թափանցման այս քաղաքականութեան հետ մեծապէս լծորդուած է։ Եւրոպացիք իրենց տնտեսական նուաճման համար հայերէն աւելի ընդունակ տարր մը չպիտի կարենան գտնել, և հայը իբր գործակից եւրոպացոց թէ՛ տնտեսական և թէ՛ նիւթապէս աւելի բարձր վիճակի մը պիտի հասնի։

Սակէ զատ, առանց բարենորոգման ձգուած Հայաստանի ապագան որոշ ըլլալով, բոլոր այն պետութիւնները, որոնք չեն ուզեր Հայաստանի լեռնադաշտը ուրիշ զօրաւոր պետութեան մը ձեռք տեսնել, կը ճնշեն պարզապէս Թիւրքիոյ վրայ, որ կատարէ խոստացուած բարենորոգումները։

Թիւրքիոյ վարիչներն ալ, գուշակելով ապագան, կերևի թէ վերջերս համոզուած են բարենորոգումներուն անհրաժեշտութեան և նոյնիսկ եւրոպական հակակշիռն ալ ընդունելու արտադրութիւն ցոյց կուտան։

Թիւրք մամուլին մէջ՝ երևսի թէ Մակեդոնիոյ մէջ եւրոպական հակակշիռը ջնջուած ըլլալը 1908-ին, Եւրոպական Թիւրքիա այսօր այդ ծեւին տակ մեզի մնար, և ասոր պէս ուրիշ կարծիքներ կարտայայտուին։ Ասոնք միտքերը պատրաստելու կը միտին։ Կառավարութիւնը անպաշտօն կերպով հրատարակութեան կուտայ բարենորոգման ծրագիրներ, որոնց մէջ եւրոպական հակակշռի անուղղակի ակնարկութիւններ կան։

Մամուլը, առանց հերքուելու, լորդ Միւլլերի և Բիչէրի Հայաստանի ընդհ. քննիչ անուանուելու զրոյցներուն վրայ կը խօսի. եւրոպական պաշտօնեաներու ընտրութիւնը որոշուած ըլլալը դանդիճը կը յայտարարէ. նոյնիսկ զրուեցաւ, թէ եւրոպական կառավարութիւններ զանազան պաշտօնեաներու համար ընտրելիներ ցոյց տուած են և Բ. Դուռը հաւանած է։

Ասոնք ազէկ նշաններ են, սակայն խարդախ միջոցներ ալ կրնան ըլլալ։

Մինչև հաշտութեան վերջնական կնքումը օսմ. կառավարութիւնը կուզէ ժամանակ շահիլ և այս տեսակ բարի տրամադրութիւններով կամուրջը անցնիլ, այսինքն առանց եւրոպական միջամտութեան մը հարկադրութեան դաշնագրին մէջ նշանակել տալու հաշտութիւնը ողջունել, և ապա գարձեալ սկսիլ վարելու երկիրը այնպէս, ինչպէս որ կը կառավարէին ասկէ առաջ։

Իսկ եթէ Բ. Դրան այս բարի տրամադրութիւնները Եւրոպա հաստատուն երաշխաւորութեան տակ առնէ, այն ատեն հայերը լիուլի զոհացում գտած կրնան համարուիլ։ Հետևաբար ամեն բան կախում ունի Եւրոպայի տրամադրութիւններէն։

Շառայլ

ԹԻՒՐՔԱՀԱՅՈՑ ԱԶԳ. ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

Թիւրքահայերի ազգ. ժողովը մայիս 17-ին դռնփակ նիստ է գումարել Կ. Պոլսում, գլխաւորապէս լսելու համար ազգ. վարչութեան, նոյնպէս և խորհրդարանական յանձնաժողովի կարծիքն ու յայտարարութիւնն այն մասին, թէ ի՞նչ արդիւնք է ձեռք բերուել այն յայտնի յիշատակագրի մատուցումէն յետոյ, որը Արշարունի պատրիարքը սրանից առաջ յանձնել էր մեծ վէզիր Մահմուդ-Շեվքէթ փաշային և որն այնքան զբաղեցրեց մտքերն ու լրագրութիւնը։

Օրակարգի մի շարք խնդիրներով զբաղվելուց յետոյ՝ ժողովը անցել է բուն խնդրին։

Սուս. Գարաեանը յանուն վարչութեան բացատրութիւններ է տուել ժողովականներին և ասել է, թէ ծանօթ յիշատակագիրը մեծ վէզիրին յանձնելուց յետոյ՝ գաւառներից եկած հարստահարական լուրերի մասին օրը օրին հաղորդվել է Բ. Դրան։ Ճառախօսն ի վերջոյ կցել է, որ վարչութիւնը դեռ չէ կարող յայտնել իր վերջնական կարծիքը արված դիմումներին իբր արձագանք ստացվելիք արդիւնքի մասին։

Ժողովը տեղ է մօտ երեք և կէս ժամ, և նրա փակումից յետոյ՝ հետաքրքիր հաղորդվել է մամուլին պաշտօնապէս.

«Ազգային երեսփոխանական ժողովը գումարուած էր լսելու վարչութեան յայտարարութիւնը մեծ-եպարքոսին մօտ կատարուած դիմումին մասին՝ ծանօթ յիշատակագրով, որ արդէն հրատարակուեցաւ լրագրաց մէջ։

«Վարչութեան տեղեկագիր Գարաեան էֆ. բերանացի բացատրութիւններ տուաւ և ժողովին ներկայացուց այն խօսակցութիւնը, որ տեղի ունեցած է եպարքոսին հետ՝ հայաբնակ նահանգներուն սպառնացող անմիջական վտանգին և անապահովութեան տեսակէտով, որ օրէ օր կը շեշտուի։

«Գարաեան էֆ. վարչապետին պատասխանները մանրամասն յիշել յետոյ, կարդաց լրագիրներու մէջ եղած վարչապետական յայտարարութիւնը և ապա թուեց անցկէ ետք տեղի ունեցած բազմաթիւ դէպքեր և քանի աւելի սպառնալիներ, զորս վրդովմամբ լսեց ժողովը։

«Գարաեան էֆ., այս բերանացի բացատրութիւնները տալէ յետոյ, աւելցուց թէ՝ վարչութիւնը իր վերջնական խօսքն ըսելէ առաջ՝ կուզէ միջոց՝ իր ջանքերուն և ձեռնարկներուն համար։ Եւ ժողովական բոլոր խմբակցութեանց ներկայացուցիչները, խորին ցաւով և յուզմամբ խօսելէ յետոյ՝ վերջին դիմումէն ետք պատահած սպանութիւններու և հարստահարական դէպքերու մասին, առաջարկեցին և ժողովը որոշեց՝ չվանալ պահանջուած միջոցը վարչութեան, որ ներկայ դժնդակ պայմաններու մէջ նուիրած է իր աշխատութիւնները՝ կարելիութեան սահմանին մէջ, և յանձնարարեց վարչութեան՝ ձեռք առնել բոլոր միջոցները՝ միանգամ ընդ միշտ վերջ տրուելու համար այս անտանելի վիճակին»։

ԱՐՇԱՐՈՒՆԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՆՈՐԱԳՈՅՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄՆԵՐԸ

—

«Օսմ. Լոյդի» խմբագիրը տեսակցութիւն մը ունեցեր է սրբազան պատրիարքին հետ, այն խնդրին վրայ, թէ ի՞նչ արդիւնք ունեցաւ յիշատակագիրը։ Սրբազան պատրիարքը հետևեալ յայտարարութիւններն ըրեր է.

— Գիտէք թէ մեր կողմէ եպարքոսին ներկայացուած յիշատակագիրը լոկ մէկ նպատակի կը ձգտէր, կառավարութեան պարզել այն անմիջական վտանգը, ուր կը գտնուէր հայ ժողովուրդը պատերազմին հետևանօք, և անկէ խնդրել հարկ եղած անօրինութիւնն ընել ազէտի մը առաջն առնելու համար։ Այս յիշատակագրին մէջ մենք բան մը չըսինք ի մասին մեր հիմնական պահանջումներուն հայաբնակ նահանգները նորմուծելի բարենորոգման համար։ Գալով մեր դիմումին արդիւնքին, կառավարութիւնը մեզ հաւատաց, թէ նահանգային իշխանութիւններուն զրկեց ազգու հրամաններ հանդարտութիւնն ու ապահովութիւնը պահպանելու համար։ Ցարդ այս հրամանները սպասուած արդիւնքը տուած չեն երևիր, քանի որ պատրիարքարանը կը շարունակէ ստանալ վրդովիչ լուրեր ի մասին հայերուն դէմ գործուած սպանութիւններու, և քանի որ ձերբակալութիւններն ու խուզարկութիւնները տակաւին յուզման մէջ կը պահեն մեր հօտը։ Ասիկա կապացուցանէ, թէ կառավարութեան նահանգային պաշտօնատարները միշտ կը հետամտին հայ ազգին հանդէպ կասկածի ու անվստահութեան քաղաքականութեան։

«Օսմ. Լոյդի» խմբագիրն օգուտ քաղելով առիթէն խօսք բացեր է պատրիարքին կողմէ քիւրդերուն նկատմամբ եղած յայտարարութիւններուն վրայ, որ քիւրդերուն կողմէ բողոքներու տեղի տուին։

Պատրիարքն ըսեր է.

— Իմ խօսքերուս յուր մեկնութիւն տուեցաւ։ Ես չդատապարտեցի քիւրդ ամբողջ ժողովուրդն ամբարիշտ, այլ քիւրդերուն այն մասը, որ ծանօթ է իր եղեռնական շահատակութիւններով, ի վնաս հայ խաղաղիկ ու աշխատաւոր մասին, այսինքն ցեղապետները, աւատապետներն ու քիւրդ աւազակախումբերը։ Ոչ չի գիտեր, թէ քիւրդ ժողովուրդին մէջ կայ դասակարգ մը, որ իր աշխատութեան պտուղով ապրելով իբր հողագործ, հայ աշխատաւոր ժողովուրդին պէս նոյն տխուր վիճակին ենթարկուած է, աւատապետներուն, բէյերուն ու աղաներուն երկաթեայ միմոյն լուծին տակ։

Ապա դասախօսը կանգ առաւ Թիւրքերի վերաբերմունքի վրա՝ դէպի քրիստոնէական եկեղեցին։ Օլգենինի ասելով՝ Թիւրքը իբր ընութիւնից հանդուրժում է այլադաւանները։ Սակայն մեղաւորը դարձեալ կենտրոնական կառավարութիւնն է, որի գործակալները շրջելով նահանգից նահանգ անտաղտիզմի որոմներ են ցանում տարբեր կրօնների պատկանող ժողովուրդների միջև։ Նրանք հրէշաւոր տուութիւններ են վերագրում քրիստոնեաներին, որոնց նպատակը իբր թէ իսլամի տապալումն է։ Դասախօսը մի քանի դէպքեր է պատմում յիշեալ դրծակալների սխրագործութիւններից, որոնք կատարվել են եկեղեցում։

Խօսելով Թիւրքահայի իրաւազուրկ դրութեան մասին, դասախօսը մատնանշում է վաղուց յայտնի իրողութեան վրա, որ Թիւրքիայում վերջին պաշտօնական իրան փաշա է երևակայում և ամեն տեսակ «քաջագործութիւնների» ձեռնարկում է քրիստոնեաների վերաբերմամբ. յետին Թիւրք պաշտօնեան սանձարձակ իշխանաւոր է։ Օլգենինը պատմում է հետևեալ դէպքը, որ կատարվել է իր ներկայութեամբ։

— Էրզրումի վիլայէթում գտնված մի ջոցին, ես այցելեցի տեղական կայմակամին, որ տոմրութիւն ունի իրան դասել կրթված անձերի շարքում։ Այդ պահին մտաւ մի զառամեալ հայ կին, որի երեք որդիքը գտնվում էին պատերազմում։ Ըժբաղդ կինը եկել էր կայմակամի մօտ՝ նրանից օգնէ տեղեկութիւն իմանալու իր զաւակների վիճակի մասին։ Իսկ իրան ուսեալ երևակայող պաշտօնեան հէնց իմ ներկայութեամբ պատասխանեց. «Մի՞թէ փողոցում քիչ շներ են թափառում, այ կին, որ եկել ես տեղեկանալու ինչ-որ երեք շների մասին...»։

Կօմենտարիաները աւելորդ են։

Սահմանադրութիւնից յետոյ երիտասարդ-թիւրքերը իբր թէ ազդարարեցին բոլոր թիւրքահպատակ ժողովուրդների հաւասարութիւնը։ Բայց երբ նայում ենք փաստերին, տեսնում ենք, որ այդտեղ հաւասարութեան հոսն անգամ չը կայ։ Բաւական է՝ օրինական վերցնել պաշտօնական թիւը Էրզրումի վիլայէթում. 2193 պաշտօնեաներից միայն 32-ն են քրիստոնեաներից, մինչդեռ այդ վիլայէթում մահմէդական ազգաբնակութեան թիւն է 362,000 հոգի, իսկ քրիստոնեաների թիւը 188,000 հոգի։ Վանի վիլայէթում 1160 պաշտօնեաներից ընդամենը 13-ն են քրիստոնեաներից։ Դատավարական գործերում դատաւորները միշտ դիտաւորեալ ապառու դիրք են բռնում հայերի վերաբերութեամբ։ Հայերի օգտին արդարացուցիչ դատավճիռները հազվիւ կէս տոկոսն է կազմում։ Իսկ վերջերս մի օրէնք հրատարակվեց, որի համաձայն հայերի վկայութիւնները դատարանում թիւրքերի դէմ ճանաչվում են անվաւեր։

Թիւրքահայի դրութեան սարսափը կայանում է, ինչպէս ասվեց, թիւրքաց կառավարութեան գործակալների պրովոկացիոն գործունէութեան մէջ։ Այդ գործունէութիւնը աւելի է սաստկացել վերջերս։ Յայտնի է, որ պատերազմից յետոյ մեծ թուով թիւրք պաշտօնեաներ ուղարկվեցին Փոքր Ասիայի զանազան տեղեր, ուր և յիշեալ պաշտօնեաները մղում են բացարձակ պրովոկացիոն դանդա քրիստոնեաների դէմ։

Օլգենինը պատմեց մի դէպք ընդհանրացնելու թիւրքաց կառավարութեան վերաբերմունքը դէպի այդ աշխարհ պրովոկացիոն։ Մի տեղում ռուսաց հիւպատոսներից մէնը, չը հանդուրժելով տեղական ոստիկանապետի բացարձակ հակաքրիստոնէական վարմունքին, բողոքում է կառավարութեան։ Վերջինս իր տեսակի «պատժում է» յանցաւորին, այսինքն ոստիկանապետը գաւառական քաղաքից պաշտօնով տեղափոխվում է նահանգական քաղաք։

Օլգենինը հակված է առանձին նշանակութիւն տալու Թիւրքահայաստանում կատարվող սովորական յանցագործութիւններին։ Օրինակ՝ Վանի շրջանում մի ամսում տեղի է ունեցել 17 սպանութեան դէպք, որ այնքան էլ խոշոր տոկոս չէ մօտ 300,000 ազգաբնակութեան մէջ։

Նոյնպիսի երևոյթ նկատվում նոյնիսկ Կովկասում, օրինակ Գանձակի նահանգում։ Սակայն վտանգաւորը այն է, որ քրիստոնեա-

*) Տես «Մշակ» № 115.

տակ կը գտնուի, սա տարբերութեամբ որ քիւրդ գիւղացին տնտեսապէս ու ընկերային տեսակէտով միայն կը տառապի, իսկ հայ գիւղացին կը տառապի թէ տնտեսապէս, թէ ընկերային տեսակէտով և թէ քաղաքականապէս։ Ինչպէս որ մենք բնաւ չծածկեցինք մեր զղջանքն հանդէպ քիւրդ միլիթալիէներուն, զանոնք շարունակ ձաղկած ու դատապարտած ենք, նոյնպէս բնաւ չենք ծածկած մեր համակրութիւնն հանդէպ քիւրդ հարստահարեալներուն։ Ասոր համոզուելու համար բաւական է ակնարկ մը նետել հայ մամուլին վրայ, որ միշտ պաշտպանած է աշխատաւոր ու խաղաղ քիւրդերը։ Այս պայմաններու մէջ, ես ինչպէս կրնայի զանազանութիւն դնել քիւրդերուն ու հայերուն միջև, անարգութեան սիւնին դամել քիւրդ ազգն ամբողջութեամբ։

«Օսմ. Լոյդի» խմբագիրն ի վերջոյ ըրեր է սա հարցումը, թէ արդիւնք ունեցա՞ւ կառավարութեան կողմէ նահանգային իշխանութեանց ղրկուած հրամանագիրը թէ չանք կը լլայ վարչական եղանակաւ լուծելու հողային վէճերը։

Պատասխանը պատասխան է։

— Ցարդ ոչ մէկ տեղ կառավարութեան այս հրամանը սկսաւ գործադրուիլ, բացի Զարսանջակի գաւառակէն, ուր ատատապետներուն ու հայ գիւղացիներուն միջև գտնուած վէճը, շնորհիւ Խարբերդի կուսակալին Զանքերուն, լուծման ճամբու մէջ մտած էր, բայց վերջին ֆպահուն ատատապետներն ըմբոստանալով Զարսանջակի կայմակամին դէմ, որ կուզէր գործադրել իր պետին՝ Խարբերդի կուսակալին հրահանգները, բուռն կերպով ընդվզմացան հողերուն հայոց եւ տրուելուն։ Հետաքրքրական մանրամասնութիւն մըն է, որ վոխանակ հարկադրելու աւատապետներն, որ հնազանդին կայմակամին, այս վերջինն է, որ եւ կանչուեցաւ։ Ասիկա այնպէսի կարգադրութիւն մըն է, որ, տարակոյս չկայ, թէ չի բարձրացներ հեղինակութիւնը կուսակալութեան բարձրագոյն իշխանութիւններուն։ Պէտք է աւելցնեմ նաև, թէ մենք միշտ պիտի պահանջենք հողային խնդրոյն լուծումը վարչական եղանակաւ, այսինքն պարզապէս եւ տալ հայոց հողերը անոնց օրինաւոր տէրերուն, հատուցում ընելով անոնց, որ օգուտ քաղելով համիդեան բէժիմին ատեն հայոց դէմ ի գործ դրուած անլուր հալածանքներէն՝ տիրեցին անոնց հողերուն։ Այսպէսի պահանջում մը ընելով մենք պարզապէս կը հետեւինք օրէնքին տառին ու ոգիին, որ կըսէ, թէ իրենց տէրերուն կողմէ լքուած հողերը, կամքէ անկախ պատճառներով, չեն կրնար նկատուիլ մահկիզ հող, այսինքն անտէր հող։

Ի վերջոյ պարբերքն ըսեր է, թէ բոլոր այս խնդիրներն ի նկատի պիտի առնուին մօտերս ազգ. ժողովին մէկ բացառիկ նիստին մէջ։

(«Բիւզանդիոն»)

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ

Վիեննա, 23 մայիսի (Ն. տ.)

Անցեալ շաբաթ գիշեր, Վիեննայի Թիվօլի պարտէզի մի թեանի մէջ կայացաւ ատենախօսութիւն հայկական հարցի մասին։ Առենախօսն էր Ֆրայհէր Մ. Կոզրի ատենախօսն։ Մի գուցէ անշան, բայց ընորոշ փաստ։ Ամբողջ 15 տարի անգլիական հիւպատոսարանները Թիւրքիայում մահմեդական տօների ժամանակ ոչ մի դրօշակ չէին բարձրացնում։ Եւ ահա 15 տարի յետոյ, Լօնդոնից ուղարկված կարգադրութեան համաձայն, ամեն մահմեդական տօնին անգլիական հիւպատոսները ամպարում են ծածանեցնել բրիտանական դրօշակները իրանց հիւպատոսարանների գլխին։ Սակայն բազմաթիւ անգլիացի օֆիցէրներ ներկայումս աշխարհս պրօպագանդա են մղում Թիւրքիայի հակառակորդների դէմ՝ իմա մասնաւորապէս Ռուսաստանի դէմ։ Արդարև մի ժամանակ Գլադստոն և մի-երկու գրող իրանց ձայնը բարձրացրին յօգուտ հայկական հարցի։ Բայց դրանք լոկ գթասիրտ, մարդասէր անհատներ էին։ Իսկ այլ է անգլիական քաղաքականութիւնը հայերի նկատմամբ, մի քաղաքականութիւն, որ սոսկ էգօիստական շահախնդիր նպատակների է հետամուտ։ Անգլիացիների այդ թշնամական վերաբերմունքը դէպի հայերը արդասիք է այն վախի, թէ Ռուսաստանը վերջ ի վերջոյ հաստատվելու է Թիւրքիայի սրբատում՝ Հայաստանում։ Բալկանեան պատերազմի հետ զուգընթաց՝ Թիւրքահայ ազգաբնակութեան մէջ բռնկված բնական ձգտումը դէպի Ռուսաստանը՝ աւելի ու աւելի է ուժեղացնում անգլիացիների հակահայկական գործունէութիւնը։

Դասախօսը դարձեալ մոգական լապտերով ցոյց տուեց մի շարք հայկական գիւղեր, տիպեր, վանքեր, տալով ինչպէս առաջին, այնպէս և այս անգամ բացատրութիւն իւրաքանչիւրի մասին։

Ապա ժամը 10½-ին յայտարարվեց ընդմիջում մօտ կէս ժամով։

Պէտք է նկատել, որ առդիտօրիան ամբողջ 1½ ժամ լրված լսում էր դասախօսին, որ հեռացաւ երկարատև ծափահարութիւնների տակ։ Ե.

(Վերջը միւս անգամ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼԸ

—o—

ՀԱՅԿԱԿԱՆ ՐԷՖՕՐՄՆԵՐԸ

(Առաջնորդող յօդուած «Новое Время» լրագրի)

—

Նախորդ յօդուածով մենք բացատրեցինք հայկական հարցի քաղաքական էութիւնը։ Մենք ցոյց տուինք, որ Եւրոպան և մասնաւորապէս Ռուսաստանը չեն կարող անկարելից մնալ դէպի քիւրդերի կատարած գազանութիւնները, ոչ թէ նրա համար, որ այդ գազանութիւնները ներկայացնում են մի արտասովոր բան, այլ գլխաւորապէս նրա համար, որ Կ. Պոլսի երիտասարդ-թիւրքերի բարոյական մակնկարագիրը այն աւազակների հետ, որոնք ծաղրում են անպաշտպան հայ ժողովուրդը, ապացուցված է անդառնալի կերպով և դոկումենտներով։ Որքան էլ ժամանակից Թիւրքիան թուլացած լինի Լօնդոնի հաշտութեան դաշնագրով, եթէ նոյն իսկ նա իշնէ երրորդ ասիճանի տէրութեան դաշնակիցների յաղթութիւններից յետոյ, այնու ամենայնիւ Կ. Պոլիսը հանդիսանում է այնպիսի կենտրոն, ուր մնում են մեծ պետութիւնների դեսպանները և ուր անհնարին է թոյլատրել բռնկումը ջնջման այն քաղաքականութեան, որ այժմ քարոզվում է երիտասարդ-թիւրքերի գործիչների կողմից։ Դա ոչ միայն իրաւունքի, այլ և այսպէս ասած միջազգային քաղաքավարութեան հարց է։

Հարց է ծագում թէ արդեօք եւրոպական դիպլոմատիան մինչ կարող է և պարտաւոր է պահանջել հայկական կոնֆլիկտի մէջ։ Մենք կարծում ենք, որ Եւրոպան այս անգամ պարտաւոր է խուսափել այն սխալից, որ միշտ գործվում էր Մակեդոնիայում և որը կայանում է նրանում, որ իրական ըէֆորմների տեղ ընդունվում են թիւրքական խոստումները։ Չը պէտք է մոռանալ, որ դեռ Բերլինի դաշնագրի մէջ կար մի յօդուած, որ վերջնականապէս կանոնաւորում էր—ինչպէս այն ժամանակ կարծում էին—հայերի դրութիւնը։ (Լրագիրը առայ է բերում 61-րդ յօդուածի ընագիրը)։ Այդ յօդուածը, ուրեմն, հաստատում էր չորս մեծերոց ըէֆորմները, հայերի ապահովութիւնը քիւրդերի ձեռքից, պարբերական տեղեկագրութիւն մեծ պետութիւններին, մեծ պետութիւնների հսկողութիւնը։ Այդ բարի ցանկութիւնների ոչ մէկը նոյնիսկ գործադրութեան սկիզբն չը ստացաւ։ Հայկական վիլայէթները ներկայումս գտնվում են բոլորովին միւնոյն (եթէ ոչ վատթար) դրութեան մէջ, ինչպէս Բերլինի դաշնագիրը ստորագրելու րօպէին։

Ոչ մի հսկողութիւն երբէք չէ կատարվել։ ոչ ոքի ոչինչ չեն հաղորդել։ ըէֆորմները մնացել են բարի դիտաւորութիւնների շրջանում։

Թէ որքան Թիւրքիան անտարբեր է վերաբերվում իր վրա դրված միջազգային պարտականութիւններին, կարելի է դատել թէկուզ այն ճառից, որ արտասանեց մեծ վէզիրը, ի պատասխանի հայոց պատրիարքի և նրան ուղեկցող պատգամաւորութեան հանդիսաւոր առաջադրութիւններին։ Այդ ճառի մէջ ամենափոքր յիշատակութիւն անգամ չը կայ Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի մասին. ամբողջ ճառը պտտվում է ընդհանուր միջոցների շրջանում։ «Մի փոքր յուզմունք,— ասել է մեծ վէզիրը,—անկասկած նկատվում է, բայց կառավարութիւնը կաշխատէ հանդարտեցնել ժողովուրդը, եթէ իրանք հայերը օգնեն նրան (?)»։ «Անկասկած, - շարունակում է մեծ վէզիրը,—անասելիական կառավարիչներից մի քանիսը իրանց կոչման բարձրութեան վրա չեն կանգնած։ Նրանցից մի քանիսը հնարաւոր են համարում հայերի վրա ձգել պատասխանատուութիւնը Թիւրքիայի համար դըժբաղդաբար աւարտված պատերազմի։ Բայց չէ որ կառավարութիւնը չէ կարող փոխել մի անգամից իր բոլոր պաշտօնեաներին. հաւատացնում եմ, որ հայերը կուզում էին ամենամեծ հերոսութեամբ և իրանց հայրենիքի հաւատարիմ զաւակներ հանդիսացան։ Ըստ հնարաւորութեան մենք կաղարկենք Անատօլիայի վիլայէթները ամենաընդունակ և գործունեայ կառավարիչներ»։ Ինչ վերաբերում է յիշատակագրի մէջ յիշված գազանութիւններին, մեծ վէզիրը խոստացաւ «քննութիւն կատարել»։ Ոչ մի վէճ չէ կարող լինել այն մասին, որ բոլոր այդ խոստումները մնում են ֆորմուլներ առանց որևէ իրական բովանդակութեան։ Նրանք տրվում են միայն ժամանակ վատատիլու համար։ Եթէ Եւրոպան և հայերը բաւականան Թիւրքական այդպիսի տակտիկայով, Հայաստանը ի հարկէ կը վերածվի երկրորդ Մակեդոնիայի։

(Վերջը միւս անգամ)

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐՆ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

28 մայիսի

Լօնդոն.—Այսօր դեսպանները գումարվեցին խորհրդակցութեան։ Ոչ մի որոշում չը կայացաւ։

—

Պարիզ.—Եվիսեան պատասխանում Պուանկարէն, շրջապատված քաղաքացիական ու զինուորական շքախմբով, ընդունեց միջազգային ֆինանսական մանդատորների անդամներին։

—

Կ. Պոլիս.—Որովհետև դեսպաններից մի քանիսը հրահանգներ չը ստացան, ոչ մի առաջադրութիւն ղենաթափութեան մասին չարվեց։

—

Սկոպլէ.—Ինչպէս յայտնի է, Իշտիբ, Բաթովիշտ, Սարամիցա և Դոյրան քաղաքներում, որոնք սկզբում գրաւվեցին սերբ զօրքերով, գտնվում էին միաժամանակ սերբ և բոլգար զօրամասեր և բոլգարների վարչական իշխանութիւն։ Այս օրերս սերբ զօրամասերը հեռացան այդ քաղաքներից և միացան իրանց զօրաբանակներին։

—

Բէլգրադ. — Մինիստրների խորհրդի նիստում մայիսի 27-ին ներկայ էին գեներալ Պուտնիկը և Սոֆիայի դեսպան Սպայկովիչը։ Ինչպէս հաղորդում են, Պուտնիկը զեկուցել է, թէ զօրքը պատրաստ է պատերազմական գործողութիւնների համար։ Նիստում վճռվել է կտրուկ կերպով պահանջել Բոլգարիայից՝ պատասխան տալու։ Այդ պահանջը ունենալու է ուլտիմատումի ձև։ Նիստից յետոյ Պաշիչը ծանօթացրեց կուսակցութիւնների լիդերներին կառավարութեան այն ձեռնարկութիւնների հետ, որոնք նախաձեռնվելու են Բոլգարիայի հետ ընդհարվելու դէպքում։ Պուանիկը ուշնդրութեան ընդունվեց թագաւորից։ Զինուորական շրջանները աւելի ու աւելի ուժեղ են դժգոհում կառավարութիւնից, գտնելով որ Սերբիան իր դանդաղկոտութեամբ նպաստում է բոլգար զօրքերի աջող կենտրօնացմանը։

—

Բուխարէստ.—Մամուլը պնդում է, թէ անհրաժեշտ է դաշն կնքել Սերբիայի, Զերնոգորիայի և Յունաստանի հետ։ Լրագիրների կարծիքով, այդ տեսակ դաշնակցութիւնը կը չափաւորէ Բոլգարիայի միտումները Դոբրուջը ձեռք բերելու և Դանուբը երկաթուղով Ադրիատիկ ծովի հետ միացնելու նկատմամբ, հնարաւորութիւն կը տայ Ռումինիային արտահանել իր հացահատիկը և արգելք կը լինի Բոլգարիային մուտք ունենալ Եգէյեան ծովը։ Լրագիրները ասում են, որ Աւստրիայի ծրագիրը՝ ստեղծել մեծ Բոլգարիա առ ի կորուստ Սերբիայի և Ռումինիայի՝ այժմ պարզ է։ Ռումինիան պէտք է վերջնականապէս խզէ իր կապերը Աւստրիայի հետ, դաշնակցելով Սերբիայի, Զերնոգորիայի և Յունաստանի հետ, նաև մերձենալով եռապետական համաձայնութեանը, առանձնապէս Ռուսաստանին։

—

Վիեննա.—Ալբանիայի ժամ. կառավարութեան պարագլուխ Իսմայիլ-Քէմալը «Նէյէ Ֆրէյէ-Պրեսսէի» աշխատակցին յայտնել է, թէ ալբանները ապատում են սերբ-բոլգարական պատերազմին և կամենում են Բոլգարիայի յաղթութիւնը։

ՎԵՐԶԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

28 մայիսի

Պետերբուրգ.—Առաւօտ բարեհաճեցին վերադառնալ Ցարսկոյէ-Սէլօ Նոցին Մեծութիւնները Գահաժառանգի և Օգոստափառ Դուստրների հետ։

—

Թէհրան.—Պրինց Սալար-ուդ-Դովլէն, չը վստահանալով գրաւել Բաշար, դիմեց դէպի Արդաբիլի նահանգը, կարծում են՝ Զէնջանի կամ Համադանի ուղղութեամբ։ Պրինցին կալանաւորելու համար, որ խռովութիւն է սերմանում մի շարք նահանգներում, շահի կառավարութիւնը ուղարկում է պարսիկ 500 կօզակի երկու գնդակներով։ Զօրամասը մեկնում է մայիսի 29-ին Զէնջան։

Սալար-ուդ-Դովլէի հետ բանակցելու համար կառավարութեան կողմից մեկնած անձինք վերադարձան, որովհետև պրինցը անյայտացել է յայտնի չէ ուր։

—

Թէհրան.—Հոգևորականութեան ազդեցութեան տակ՝ քաղաքում ուժեղ յուզմունք է սկսվել աշխարհիկ դատարաններ ու օրէնքներ մտցնելու դէմ, որոնք իբր հակասում են շարիաթին։ Ագիտատորները կոչ են անում փակել բազարները և յայտարարել ընդհանուր գործադուլ։

—

Հոմ.—Թագաւորի Սոսկիօլմ մեկնելու ժամանակը դեռ որոշված չէ։ Կարծում են, որ թագաւորը կը մեկնէ յունիսի կէսերին։ Թագաւորը Սան-Զուլիանօյի ուղեկցութեամբ երկաթուղով կը մեկնէ Կիլ, ուր կը նստէ թագաւորական «Տրինակրիա» զբօսանաւը, որին մինչև Սոսկիօլմ կուղեկցէ «Ամալֆի» յածանաւը։

—

Վիեննա.—Տիսսան կայսրին ներկայացրեց նոր կաբինէտի անդամների ցուցակը։ Նոր մինիստրները կերդվեն վաղը։

—

Սիկեստ.—Առաւօտեան պօստի նոր շինութեան հետևում պայթեց ռումբ։ Կարծում են, որ դա սոցիալիստական հիների գործն է։

—

Լազրոնիօ (Հիւսիսային Սպանիա).—Կուզուրիտում միտինգից յետոյ կարլիստները կրակեցին Կաղալարէյնի բնակիչների վրա։ Օրթը մարդ ծանր վիրաւորվեցին, 5 հոգի կայանատրվեցին։ Քաղաքում մեծ յուզմունք է տիրում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕԳՈՒՏ «ՄՇԱԿԻ» ՖՕՆԴԻ

—

Ինչպէս տպված է վերջին անգամ «Մշակի» այս տարվայ № 48-ի մէջ, ստացված է ընդամենը 30,282 ր. 82 կ.։ Դրա հետ մենք յայտնել էինք, որ թէև մի քանի քաղաքներում—Բագու, Մոսկվա, Կիևում—նոյնպէս կատարվել են հանգանակութիւններ, բայց գումարները դեռ չեն ստացվել։

Այս օրերս յօբելեանական յանձնաժողովի բիւրօն ստացաւ 1 Բազմից տ. Եղիսաբէթ Սարգսեանից մի նամակ, որով յայտնելով, որ Բագուում հանգանակված է անցեալ տարի 4192 ր. 98 կ., և ուղարկելով թէ դրամը և թէ նուիրատուների ցուցակը, յայտնում է՝ որ նուիրատուների բաղձանքն է պահել այս գումարը առանձին, իբրև Բագուի յատուկ գումար ի նպաստ «Մշակի» և գործադրել 10 տարվայ ընթացքում, ծախսելով տարին 400 ռուբլի, սկսած ներկայ տարուց և վերջին մնացորդը, տոկոսիքով միասին, տասներորդ տարին։ (Նուիրատուներն են 1) Արշակ Օ. Զուկասեան 500 ռուբլի, 2) Աստուածատուր Վաչեան 300 ռուբլի, 3) Մովսէս, Յովհաննէս, Կոնստանդին, Արսէն և Տ. Կրասիլնիկեաններ 300 ռուբլի, 4) Եղբարք Մայիլեաններ 200 ր., 5) տ. Եղիսաբէթ Սարգսեան 200 ր. (բացի սրանից, նա վճարել է և տիկնոջ մասնաժողովին 100 ր.), 6) Թումանեան եղբարք 150 ր., 7) Աբ. Նասիբեան և եղբ. Տէր-Պետրոսեան 150 ր., 8) Բաղդ. Յակոբեան և Ընկ. 150 ր., 9) Լ. Մայիլեան և Որդիք 100 ր., 10) Հրիպ. Ադամեան 100 ր., 11) Գրասենեակ Հ. Ադամեանի 100 ր., 12) «Արամազդ» Ընկերութիւն 100 ր., 13) «Որոտան» Ընկ. 100 ր., 14) «Արշալոյս» Ընկ. 100 ր., 15) «Սուրճասանիկ» Ընկ. 100 ր., 16) Բաղուի Կրէդիտային Ընկ. 100 ր., 17) Խոր. Բէգլարեան 100 ր., 18) Ա. Տէր-Յովհաննիսեան 100 ր., 19) Մ. Խ. Աւագեան 100 ր., 20) Մելիքսէթ և Գ. Մախմուրեան 100 ր., 21) Արշակ Պարոնեան 100 ր., 22) Բժ. Թ. Զաքարեան 100 ր., 23) Տ. Բուզաղեան 100 ր., 24) Ոմն և ոմն 85 ր., 25) Գր. Թումայեան և Ընկ. 75 ր., 26) Ան. Քալանթարի միջոցով հանգանակված է 52 ր. 20 կ., 27) Տ. Գէորգեան 50 ր., 28) Եղբ. Արութչեան 50 ր., 29) Միքայէլ Պապաջանեան 50 ր., 30) Ն. Մ. Շաքիդանեան 50 ր., 31) Վ. Գ. Երիցեան 50 ր., 32) Սա. Խ. Խօջայեան 25 ր., 33) Բժշկ. Քալանթարեան 25 ր., 34) Գր. Քալանթար 25 ր., 35) Ս. Ա. Տէր-Ղազարեան 25 ր., 36) Մ. Ա. Մարիկոնեան 25 ր., 37) Կանայեան Ընկ. Ծառայողներից, Բագրատ Վարդանեանի միջոցով հանգանակված, 19 ր. 78 կ., 38) Յով. Զուրաբեան 15 ր., 39) Տէր-Յովհաննիսեան՝ 16 ր., 40) Զախմախչեան 10 ր., 41) Առուստ Ա. 10 ր., 42) Ն. Խ. Պետրոսեան 10 ր., 43) Մ. Ս. Սարգսեան 15 ր., 44) ոմն 5 ր., գումարն է 4136 ր. 98 կ., որի համար տոկոս է ստացված տ. Սարգսեանի ձեռքով 56 ր., ընդամենը ուրեմն 4192 ր. 98 կ.։ II Ղուբայից, Մեկրոն Զ. Սարամբէգեանից 10 ր.։ Ուրեմն նախորդ ստացածների հետ միասին ընդհանուր գումարն է 34,485 ռուբ. 80 կոպ.։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Մենք հաղորդեցինք, որ Ալ. Խաչատուրեան, Ալ. Քալանթար և Հ. Առաքելեան դիմեցին «Бирж. Вѣд.» լրագրի խմբագրութեան՝ հայ հասարակութեան մի խմբի կողմից, խնդրելով թոյլատրել Օլգենինին մնալ մի քանի ժամանակ Թիֆլիսում իր նիւթերը Թիւրքահայաստանի մասին մշակելու և տպագրութեան տալու համար։ Այժմ տեղեկացվել է պատասխան յիշեալ թերթի խմբագրութիւնից, թէ Օլգենինը կարող է մնալ երկու շաբաթ ևս Թիֆլիսում վերոյիշեալ նպատակով, որից յետոյ նա ստացել է առաջարկ գալ Պարկանան և տալ Մեծգոլիա։ Օլգենինը երեկ երեկոյեան մեկնեց Բագու՝ այդտեղ կրկնելու իր դասախօսութիւնը «անհետացող Հայաստանի» մասին։ Բագուից վերադառնալով, նա կը սկսի կարգի բերել իր նիւթերը։

◆ Թիֆլիսում վախճանվեց երկարատև տկարութիւնից յետոյ Ս.Իրան Մանդինեանը։ Հանգուցեալը երկար տարիներ պաշտօնավարում էր Ներսիսեան դպրոցում, ուր սիրելի ուսուցիչ էր իր բոլոր աշակերտների համար շնորհիւ իր հայրական վերաբերմունքի և ընութիւնից օժտված հումօրի։ Ս. Մանդինեան, բացի մանկավարժական գործունէութիւնից, յայտնի էր հայ հասարա-

կութեանը և իր թատրոնական գործունէութեամբ։ Իր ժամանակ նա վայելում էր տաղանդաւոր կոմիկի հռչակ։ Հասակն առած, նա ընդ միշտ հեռացաւ երկու ասպարէզից էլ և իր կեանքի վերջալոյսը անցրեց այնքան էլ ոչ նախանձելի վիճակում։ Նրա մահից յետոյ մնում է բազմանդամ ընտանիք։

◆ Վաղը, ուրբաթ, Գրական-Գեղագիտական Սալօնում, երեկոյեան ժ. 6-ին, կը կայանայ դերասան Գ. Տէր-Դաւթեանի յօբելեանական յանձնաժողովի վերջին ընդհանուր ժողովը, լսելու յօբելեանական կարգադիր բիւրօյի հաշուետուութիւնը և լուծելու յանձնաժողովը։ Առանձին հրաւիրագրեր չեն ուղարկվելու ոչ ոքի։

◆ Թիֆլիսում գոյութիւն ունեցող «Արբիգ» ֆիրման, չը բաւականանալով քաղաքի զանազան մասերում բանալ էժան գներով հաց վաճառելու կրպակներ, շարունակում է այդ գեղեցիկ միտքը իրականացնել քաղաքի աւելի այն թաղամասերում, ուր բնակվում են աղքատութեան աղը։ Այդ կրպակներում հացը վաքառ խաւերը։ Այդ կրպակներում հացը վաքառ խաւերը։ Այդ կրպակներում հացը վաքառ խաւեր